ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅՀԳ-ՌՅՀԴ | 1924

ՀԱՏՈՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՁԱ | ԹԻՒ 12

Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Բ. ՏԱՂԱՐԱՆ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆԱՑ

◁○▷

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆՍ Ձեռագրատան մէկ Տաղարանին ողին վրայ գրուած է այսպէս. «(556. Բ. Ա.) Բ. Տաղարան Երեմիայ դպրի», որ կը պարունակէ 102 մագաղաթեայ թղթեր. իր երկայնքն է 9,60 հմ. լայնքը՝ 7,30 հմ. միասին գրութիւն մ'է նոտր գրով, ունի յաւելուած մը թղթէ, բայց նուազ թիւով, իր կազմը տախտակ է կաշիով պատած, որոյ վրայ կան բարեձեւ խորաքանդակներ, գրիչն և թուականը անծանօթ է։ Այս է անոր արտաքին երեւոյթը։

Այս նկատմամբ մեր ձեռագրացուցակը (էջ 561) կ'ըսէ. «Բ. Տաղարան՝ փոքրիկ՝ նեղ, նոտրգիր մագաղաթեայ, յորում կան տաղք Երեմիայի Քէօմիւրճեան, Կոյր Ղազարու, Յակոբայ Ռետորի և այլն, հայերէն և թուրքերէն։ Յիշատակ է Պարոն Աւետիքի Ջօհրապեան, յղեալ առ մեզ ի Կ. Պոլսոյ յամի 1787 = ՌՄԼԶ»։

Մեր հայրերէն մին՝ ձեռագրիս սկիզբը դրած է Տաղարանիս ցուցակը այսպէս.

Տաղք Երեմիայ քահանայի Քէօմիւրճեան 1-79
Գրիգորի 80
Վարդեվանի 82
Թադոսի 87
Զաքարիայի 88
Կոյր Ղազարի Գույումճօղլու 106
Յակոբայ երիցու 114
Յակոբայ վարդապետի 117
Նորին Յակոբայ վարդապետի Ռետորի կիլիկեան ազգաւ իրիցու 121
Արիստակէսի 134
Յակոբայ վ.ի սսեցւոյ ռետորի 140
Տէր Յովանէսի 150
Կոյր Ղազարի 154, 159, 163, 165, 166։

Կը շարունակէ նոյնը. «Այս անուանք տաղասաց արանցդ գտանին կամ ի սկզբնատառս կամ ի վերջին տողս տաղիցդ նշանակելոց ըստ թղթահամարոյ։ Թող զայլ տաղս՝ որք կան ի սմին տաղարանի

digitised by A.R.A.R.@

առանց բացայայտ անուան հեղինակացն․ կան ի սմին և «Գոչէր հրեշտակն» յերես 129, «Ո՛վ զարմանալի»․ 136։

Ձեռագիրս ճոխ է՝ գեղեցկագոյն ոսկեբանգ պատկերիկներով, որոնք կը ներկայացնեն թէ՛ սրբազան պատկերներ և թէ թուրք կամ այլ համազգեստներով անձեր, կան նմանապէս թռչնոց և կենդանեաց համախմբութիւնք ճարտարօրէն կազմուած։ Նոյն ոճով են իր մէջ փոքրիկ չքնաղ խորանիկներ գունազեղ երանգներով, ինչպէս նաեւ լուսանցազարդեր և գլխագրեր։

Սոյն Տաղարանէն կը հրատարակենք հետաքրքրական տաղ մը, որոյ վերնագիրն է «ՏԱՂ ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԵՐԱՅ ԽՈԶԻ ԱԶՆԻԻ»․ արդէն լուսանցքին վրան ալ կայ նկարուած խոզ մը։ Ոտանաւորը հետևեալն է․

Արդ խոզն է դեղ ամէն ցաւի,
Ինքն բազում իրս պիտանի,
Քսան ազգ նա դեղ է ցաւի
Սուրբ կերակուր քրիստոնէի։

Ատամն է դեղցեց հիւանդի,
Եւ պիտանի թղթակոկի
Եւ աղացեալ ընդ շաքարի՝
Դեղ է աչաց կուրած մարդի։

Եւ եղն է դեղ չոշած ձիի,
Արիւնըն դեղ է Ղուզղունի,
Իսկ միսըն դեղ է ջերմնոտի,
Քացխով եփեալ դեղ քամոտի։

Ցորժամ որ միսն գինով եփի,
Դեղ է ցաւոց արեան բերի.
Մազն՝ ոչխարաց թիթղըն ցաւի.
Եւ պիտանի թիթիղածի։

Դեղ է մօրված մազաթափի,
Այլ և գըլխոյն մազնընկածի.
Եւ երբ այրեն զմազըն խոզի
Ծուխն ոջլադեղ մեղրաճանճի։

Ճրագուն ծեծեալ ընդ սըխտորի
Դեղ է ցըրտոյ մըսան մարդի.
Այլ և մօրված մազակերի,
Մազ բուսցընէ քօսա մարդի։

Խոզի ձայնէն ֆիլըն փախչի,
Եւ պատերազմըն խափանի։

Միսըն խորված դեղ քաղցածի,
Այսքան բարեացս թուլքըն զըրկի։

Ձերիկամունքն վարազ խոզի
Քարկայ դեղթափ ամէն ցաւի։
Տաքտաք ըմպէ զարիւն խոզի,
Վէրէմ ցաւոցըն ազատի։

Խոզի լեղի դեղ է ցաւի,
Շան կատղածի զմարդ բռնածի
Փետթէ զմազն դու քէլ գըլխի
Զլեղին այն ած զնա ած՝ բժշկի։

Դարձեալ քեզ դեղ ասեմ պօղ մի
Թէ մարդ խոկա յանկարծակի,
Շանփին խառնեն ընդ կաթ խոզի
Քսեն ի կուլն դեղ է պօղ մի։

Դարձեալ քեզ դեղ տամ պիտանի,
Երբ աչք մարդոյն վատատեսի,
Ձերեկկամաց ճրագուն խոզի,
Հաւու փետրով քըսել պիտի։

Արտևանունքն աչաց մարդի՝
Լուսաւորեալ պայծառացցի
Այլ և վէզին խոզընմազի,
Խիստ գեղեցիկ ֆըռչին լինի։

Նշանակուած չէ ստանաւոր գրութեանս հեղինակը։

Ո․ Կ․

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ

Ս· ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(*Շար․ տես Բազմավէպ*, 1924 *էջ* 356)

Լ․

ՀԷՔԻՄԱՐԱՆ

Այլևայլ հեղինակներէ ժողոված ու մ'է այս Ձեռագիրը, և գլխաւորաբար Ամիրտովլաթի բժշկարանէն վերցուած, որ կը կրէ Ձեռագրատան 1767 *թուահամարը։*

21 *հարիւրորդամեդր մեծութիւն,* 16,5 *հարիւրորդամեդր լայնութիւն և* 1,5 *հարիւրորդամեդր թանձրութիւն ունի․ կաշէկազմ է՝ բայց քայքայուած վիճակի մէջ.*

digitised by A.R.A.R.@